բեմն այս բոպէիս ամենահետաքրքիր խնդիրները Գերմանիայում յուզվում են ոչ թէ մամուլի, այլ գրականութեան մէջ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

յունիսի 29

Ձեզ յայտնի է, որ տեղս սաստիկ հացի թանգութիւն էր սպառնում ժողովրդեան աղքատ դասին. իսկայապէս նոյնպէս, որ Բագուի փոխ-նահանգապետն եկած էր վերահասու լինելու և տնօրէնութիւն անելու համար, բայց թէ ինչ հետևանք ունեցաւ, ահա գրեմ։

Թանգութիւնը քաղաքի բնակիչներին այնքան չէր սպառնում, որքան գիւղացիներին. և քաղաքիս մէջ գցել էին թանգութիւնը նոյն իսկ գիւղացիք, որոնք սուված մնալով՝ Շամախու չրջակայ զանազան գիւղերից թափվել էին մեծ բազմութեամբ այստեղ։ Փոխ-նահանգապետը տեղս գալուց երրորդ օրիցը սկսեց առնել ցորեն թէ քաղաքիս ամբարներից թէ գիւղերից՝ և բաժանեց աղքատ գիւղացիներին, տալով մարդագլուխ երեք պուդ հաց մինչև նոր հունձքը։ Ասում են մօտ 1300 թաղարաչափ առած է և յիշեալ տեսակ բաժանած գիւղացիներին (մի թաղարը հաւասար է 25 պուդի). իսկ քաղաքիս աղքատների համար հոգալը թողած է քաղաքացիներին։

Լուսաւորչականները ստորագրութիւն էին բացել աղքատների համար փող ժողովելու և առանց տոկոսի նրանց բաժանելու և արդէն 1800 ռուբլու չափ ստորագրված էին. բայց չը գիտեմ պ. պ. ստորագրողներն ինչ հարկից ստիպված՝ զղջացին իրանց արած առատաձեռնութեան վրա (երևի երկիւղ կրեցին թէ իրանք էլ կը մնան սոված) և չը տուին ստորագրած դումարները։ Երեք թէ չորս բարեսիրտ երիտասարդներ, որոնց յորդորանքով ստորագրութիւնը բացված էր, ժողովեցին իրանց մէջ չորս հարիւր ռուբլի և բաժանեցին քաղաքիս բոլոր աղքատներին, տալով իւրաքանչիւր հոգուն մէկ ռուբլի։ Նոյն միջոցին սորանց օգնեց և պարոն Կ. Լալայեանցը, որը Բագու է բնակվում, ուղարկելով 100 մէշոկ (500 պուդ) Աստրախանի ալիւր։ Այս ալիւրը նոյնպէս բաժանվեց բոլոր աղքատներին։ Փառք և պատիւ յիշեալ պարոններին, որոնք այս և սորանման շատ դէպքերում չեն զլացել իրանց օգնութիւնը հասցնել նեղուածներին և միշտ բարի օրինակ են եղած միւսներին։

Այժմ հացը քաղաքումս երկրորդ չարաթն է, որ բաւականին էժանացել է. երէկ ծախել են ալիւրի պուդը եօթու ռուբլով։ Այսպէս 3 ռուբլուց երկու չարաթվա մէջ 2 ռուբլի դառնալու պատճառը հետևեալն է։

Թէև տեղս ցորեն շատ կայ, բայց մի քանի պարոններ մեծ քանակութեամբ ամբարել էին, որ վերջը թանգ գներով ծախեն։ Այժմ այդ պարոնները, տեսնելով որ տէրութիւնը ապահովց չատերի դրութիւնը և մանաւանդ վախելով այս քանի օրերս տեղս տարածված լուրից (այսինքն թէ մինչև նոր հացի բուսնելը տէրութիւնը մըտադիր է իր ամբարներից հաց բաց թողնելու աղքատներին և գիւղացիներին թէ ուտելու և թէ սերմանելու) որ չը լինի թէ ճշմարտանայ, չտալում են՝ ինչպէս և իցէ՝ ծախել իրանց ցորենները։ Սա մէկ պատճառն է, միւսն էլ այս է, որ այն անասելի ցրտերն և սաստիկ ձիւնը, որը 80 և 100 տարեկան ծերունիները առաջի անգամն են տեսնում այս տարի Շամախում, բաւականին մեղմացած են և քանի մի գիւղերից կարողացել են գիւղացիք ջրաղացներում ալիւր աղալ և բերել քաղաք ծախելու։

Ցիշեցի ցրտերի մասին, հարկաւոր եմ համարում քանի մի մանրամասնութիւններ յայտնել նրանց մասին։ Ցիւնի բարձրութիւնը մէկ արշին էր, իսկ բուքը այնքան սաստիկ էր, որ մի քանի օր քաղաքի յարաբերութիւնը չրջակայ գիւղերի հետ կըտրված էր. 5 մարդ էլ զոհ գնացին նոյն օրերը բուքին և ցրտին, երեքը (թուրք) խեղդվելով և երկուսը սառչելով, որը ճանապարհներին և որը ջրաղացներում։ Գայլերն էլ սկսան թափառել ձիւնի անհուն սփռոցի վրա և այնքան յանդգնեցան, որ սկսան ցերեկով քաղաքի չրջակայքումը անցորդների վրա յարձակվել, իսկ գիւղերը քաղաքիս փողոցներումն։ Բարեբաղդաբար բազմութեամբ չեն ման գալիս, այլ մէկ մէկ, այնպէս որ կամ սպանվում են, կամ յաղթուած փախչում։

Ինչպէս հասարակ ժողովրդի մէջ առած է՝ կասեն թէ, ասև եղը՝ վեր ընկաւ, դանակատը չատացաւ։ մեր Շամախին այժմ վեր ընկած սև եղն է դարձած և դժբաղդութիւնները հետզհետէ սորա գլխին են թափվում։ Եւ կարծես թէ վերջիններից մէկը միւսին կարապետն է։ Վերև յիշածներս դեռ բաւական չէին, այժմ մեզ մի մեծ և աւելի սարսափելի վտանգ է սպառնում. խօսքս տարափոխիկ հիւանդութեան վրա է։ Անցեալ չարաթ լուր տարածվեց, թէ քաղաքիցս 50 կամ 55 վերստաչափ դէպի արևմուտ գտնված երկու թուրքաբնակ Ալվանդ և Քիւրդամիր կոչված գիւղերումն սաստիկ կոտորած կայ, այնպէս որ օրական մէկ գիւղից 30 հոգի մեռնում են։ Մէկը ասում էր տիֆ է (брюшной тифъ), միւսը—թէ դիֆտերիտ, բայց հաստատը իմացող չը կար. միայն ասում էին կամ բուքը ուռչում է և մի քանի ժամուա մէջ զոհին խեղդում կամ թէ սաստիկ ծակոցով է սկսում որովայնից և կէս ժամում զոհին գերեզման տանում։ Անցեալ չարաթ Բագուի Նահանգապետը և տեղիս գաւառապետը, բժիշկներ առնելով իրանց հետ, գնացին յիշեալ գիւղերը հիւանդութիւնը հետազօտելու և եթէ տարափոխիկ լինելը ստոյգ է, միջոցներ որոնելու առաջն առնելու համար։ Մի չարաթ է՝ որ նրանք գնացել են և մինչև օրս դեռ յետ չեն դարձած, չը գիտենք ինչպէս գտան։ Տայ Աստուած, որ այնքան վտանգաւոր չը լինի, ինչպէս որ կարծում են։

Մի հայ

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Գանձակ, 6 փետրվարի

Ի լրումն նամակիս, որ տպած է այս տարվայ «Մշակի» № 6-ումը, ընդ ամին ուղարկելով քառասուն և ութ ռուբլի յօգուտ «Արարատեան և Կիլիկեան» ընկերութեանց, որ պ. Ա. Թոխմախեանց ժողոված և յանձնած էր ինձ ի պահեստ յընթացս 1879 ամի, մինչև ստորագրութեան վերջանալը և մի քանի ապառիկներ ժողովելը,—պարտք եմ համարում յարգոյապար յայտնել, որ այս 48 ռուբլուց և անցեալ տարի խմբագրութեանդ ուղարկած 230 ր. ջոկ լինի մօտ աւելորդ փող չը կայ յիշեալ ընկերութեանց պատկանեալ, իսկ այժմ ուղարկվող դրամոց նուիրողների ցուցակը խմբագրութիւնը կը ստանայ պ. Թոխմախեանից, որին այս մասին գրեցի և որ վաղուց է գտնվում է Դէդաբէգու պղնձահալ գործարանումը իր մասնաւոր գործերով։

Երեցփոխան Ն. Տէր-Ներսէսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք յօգուտ վանի սովատանջների Վերին-Ադուլիսի բնակիչ եղբարք Տէր-Միքայէլեաններից 100 ռուբլի և նոյն պարոններից 50 ռուբլի յօգուտ այն սովալլուկների, որոնք այժմ Ալաչկերտից Աալմաստ են գաղթած։

—

Մեզ հաղորդում են ՇՈՒՎԱՎԷՐ գիւղից, որ այժմ այնտեղ հացը չատ թանգացել է։ Անցեալ տարի այդ պիտոյքը արժէր պուդը 1 ր. 40 կոպ., իսկ այժմ պուդը արժէ 3 ռուբլի, և այն էլ դժուար է ճարվում։ Գիւղացիներից չատերը բոլորովին հաց չունեն։ Նոյնպէս մեզ գրում են, որ Շուվավէր գիւղում սարսափելի գողութիւններ են լինում։ Ամեն երեկոյ խանութներ և ամբարներ են կոտրում ցորենը գողանալու դիտաւորութեամբ, խոտի դէզերը կրակ են տալիս, այգիների վաղներ կոտրում, մամեանց այգիների չափարները կրակ են տալիս։ Եւ այդ բոլորը պատահում է չատ անգամ հարսանիքի երեկոներին, և նոյն իսկ նորափեսաները այդ բոլորն են անում միմեանց փոխադարձաբար խանգարելու հարսանիքի հանդէսը։

—

«Մշակի» խմբագրութեան մէջ ստացվեցան Կ. Պոլսի «Արարատեան» ընկերութեան երկու վկայականներ (դիպլոմներ) մշանջենաւոր պատի անդամակցութեան, որոնցից մինը պ. Եսայի Գէորգեան Փիթոյեանցի անունով, իսկ երկրորդը «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունու անունով։

—

Ստացանք ԹԻՖԼԻՍԻ Գիմնազիայի մի քանի աշակերտներից և այլ երիտասարդներից յօգուտ վանի սովալլուկների 7 ռուբլի։ Ահա նուիրատու երիտասարդների անունները։ Խաչակ Զուրաբեանց 1 ր. 7 կ., Բողդան Զուրաբեանց 1 ր., Ե. Զուրաբեանց 1 ր., Սարա Զուրաբեանց 50 կ., Ալէքսանդր Զուրաբեանց 40 կ., Յովսէփ Խանդամիրեանց 1 ր. 20 կ., Յովհաննէս Խանդամիրեանց 15 կ., Պետրոս Բաղդասարեանց 60 կ., Սարգիս Եարեանց 20 կ., Մաճալարիանի 20 կ., Մկրտիչ Յարութիւնեանց 20 կ., Մաղաքել Մկրտչեանց 18 կ., Ա. Ստաղլին 30 կ., Գուլարը 7 ռուբլ։

—

Ահա մի քանի օր է, որ ամբողջ ԹԻՖԼԻՍ քաղաքը խօսում է մի անցքի վրա, այն է մեր քաղաքում յայտնի վաճառականների, Զանջուղազանց եղբայրների սնանկանալու վրա։ Սնանկացածները իրանց կատարելապէս անկարող են յայտնում, ինչպէս ասում են, որ և է բան վճարել իրանց պարտատէրերին։ Ասում են որ նրանց պարտքը հասնում է 750,000 ռուբլու։ Նրանք ունէին մի քանի փառաւոր մագազիններ Թիֆլիսում։ Պատմում են որ սնանկանալուց մի քանի օր առաջ Զանջուղազանց եղբայրների խանութում անհամեմատ չատ ապրանքներ կային, քան թէ սնանկանալու նախընթաց օրը։

—

«Русскій Курьеръ» լրագրում կարդում ենք, որ ռուս կանայք չարունակում են տոկունութեամբ ձեռ բարձրագոյն ուսմանը։ Օրինակ Ֆրանսիական Մոնպէլիէ քաղաքի համալսարանում մի օրիորդ Տրաչեվա ազգանունով նորերումս տուել է բժշկութեան գոկտորի քննութիւնը։ Նոյն համալսարանում կայ և մի ուրիշ ռուս օրիորդ, որ բարաւում է մանկավարժութեամբ և պատրաստվում է ուսուցչուհու պաշտօնին։

—

«Страна» լրագիրը հաղորդում է որ յունվարի 28-ին նշանաւոր ռուս հեղինակ Իվան Տուրգենեվ հասաւ Ս. Պետերբուրգ։ Լրագիրը ասում է որ Տուրգենեվ հիւանդոցի սանդխաներից իջնելով,

---

հարստահարելոց անհամար աղերսագիրներուն վրա, բարեհաճեցաւ գոնէ ի ցոյց ժամանակ առ ժամանակ յանձնաժողովոյ անդամները զրկել ի Հայաստան. Բ. Դուքը անոնց իբրև պաշտօն տուաւ ազգայական խնդիրները կանոնաւորել։

Այս յանձնաժողովոյ անդամոց մէջ յիշատակութեան արժանի են Շահին պէյը, Սարգիս և Մարկոս էֆ. Աղաբեկեան եղբարքը, որք 1867-ին Կ. Պոլսէն գնացին ի Զարսանձազ, նորա վիճակը քննեցին, որոյ համար մի ծրագիր խրկեցին Բ. Դրբան, բայց.... 1868-ին Ալի պէյն ու Մարկոս էֆ. Աղաբեկեանը յանձնաժողովոյ անդամ անուանուեցան Սվազի, Խարբերդի, Սղերտի և Տիգրիսի հովտին ազգայական գործերը կանոնաւորելու համար, սոքա գնացին և Բ. Դրան մի ծրագիր զրկեցին, բայց գործը հոն մնաց։ 1873-ին պաշտօնապէս մատուցուած մի մանրաման տեղեկագրով Խրիմեան պատրիարքը Բ. Դրան ուշադրութիւնը հայոց կրած հարստահարութեանց վրա դարձուց. յիրաւի Նորին սրբազնութիւնը պաշտօնական խոստումն ստացաւ, բայց երբէք գործադրութիւն...։ 1874-ին Ներսէս պատրիարքը մեծ եպարքոս Մահմուտ Նեդիմ փաշային դիմելով յայտնեցաւ կազմել տալ մի յանձնաժողով որոյ անդամ էին երկու ազնուաբարոյ հայեր... Գրիգոր էֆ. Օտեան, և Ապրօ Սահակ էֆ. և երկու բարձրաստիճան թուրքեր. այս յանձնաժողովը, որ Բ. Դուռը նիստ պիտի ունենար, պիտի կարգադրէր ազգայական բոլոր գործերը, ընդհանրապէս դատաստանները պիտի կերպարանաւորէր և հարստահարութեանց դարման պիտի տանէր. սակայն մի քանի օր վերջ մի քաղաքական փոթորիկ Սուլթան Ապտիւլ-Ազիզի գահընկէցութեանը վրա գալով, յանձնաժողովը ցրուեցաւ ապարդիւն.... 1877-ին Բ. Դուռը Ներսէս պատրիարքին՝ Վանայ տխուր վիճակը դարմանելու համար ըրած ազգու թախանձանքները լսելով, սովորական և Վանը մի նոր վիլայէթ ընելու խոստումներէն դատ, մի հայ տեղւոյն կուսակալին օգնական կարգեց. բայց մինչ ցարդ արդիւնք բնաւ.... Վերջապէս հայոց տառապանքը վերջին ծայր լինելով վերջին պատերազմին ատեն, և մանաւանդ երբ Ալաչկերտի և Պէյազետու սոսկալի կոտորածէն սարսափած, հայք սկսան գաղթել, և այս գաղթականութիւնը 2000 ընտանեաց կնաքը, ինչքը և պատիւը վտանգեց։ Ն. սրբազնութիւնը, Ներսէս պատրիարքը, ուղղակի Սուլթան Ապտ-իւլ-Համիդի դիմելով, Նորին Վեհափառութեան չնորհը հայցեց Հայաստանի բոլոր քրիստոնէից համար. յիրաւի Սուլթանը խոստացաւ վերջ մը տալ իրաց այս վիճակին, բայց պատերազմն արգելք եղաւ. բայց երբ երկու պատերազմող կառավարութիւնները խաղաղութիւն հաստատելով ի Սան-Սթէֆանօ, խաղաղութեան դաշնագրի 16-երորդ յօդուածը չը նորհեցին, հայք առաւել կամ նուազ կենդանացան մի ապագայ բարօրութեան յուսովը։

Նորին Սրբազնութիւնը, հայոց Ներսէս պատրիարքը և Ազգային ժողովը նկատելով թէ Բ. Դրբան սահմանած յանձնաժողովները բնաւ կարող չեն հարստահարեալ հայերը գոհացնելու և Հայաստանի մէջ կենաց, ընչից և պատուոյ ապահովութիւնը հաստատելու, թէ Նորին Վեհ. Սուլթանին ֆիրմանով հրատարակած և հաստատած կրօնից ազատութիւնը, արդարութիւնը և հաւասարութիւնը ժողովրդեան ամէն դասերուն մէջ գործադրուած չեն, թէ մի և նոյն ժամանակ թիւրք կայսրութեան գոյութիւնն ու բարգաւաճումը անցած են եւրոպական օրագրին մէջ և թէ 16-երորդ յօդուածը պատեհ առիթ մ'է եւրոպական տէրութեանց դիմելու և երկրին ապագայ բարօրութեան հարկաւոր բարեկարգութեանց համար անոնց միջամտութիւնը հայցելու,—պատուիրակներ զրկեց ի Պէռլին վեհաժողովն Հայաստանի և հայոց բարգաւաճման անհրաժեշտ և արմատական դարման մը խնդրելու համար։ Մեծ տէրութիւնները 16-երորդ յօդուածը փոփոխելով հաճեցան մեզ չնորհել Պէռլինի դաշնագրին 61-րորդ յօդուածը, որ մինչ ցարդ ուրիշ մի արդիւնք ունեցած չէ, միայն թէ Եուսուֆ փաշան և Սարգիս էֆ. Աղաբեկեանը Հայաստան եկան իբրև լիազօր յանձնաժողովոյ անդամ, որք երկրին և ժողովրդեան օգտակար ոչ մի բանի ձեռնարկութիւն ըրած չեն։

Կարևոր է հոս յիշել այս վճռական եղելութիւնը, որ հայոց վրա սուղի նստաւ։ Ամերիկացի քարոզիչք, կրօնական ազատութեան հրատարակութեամբ քաջալերուած, եկան աւետարան քարոզելու ի Թիւրքիա. արդարև նոքա մեծ ծառայութիւն մատուցած պիտի լինէին տառապեալ հայոց, բարբարոս ցեղերը աւետարանով քաղաքակրթելով, որովհետև հայք ստի մեծապէս օգուտ պիտի քաղէին քարոզչաց նկատմամբ լի երախտագիտութեամբ, բայց իրերը ուրիշ կերպով անցան. Բ. Դուռը անոնց թոյլ չը տուաւ առհասարակ երկրին քրիստոնեայ հպատակաց և ժողովրդին, և նոյն իսկ կառավարութեան բարօրութեան որչափ կարևոր դերը խաղալ, կամ թէ թոյլ տուաւ քրիստոնէից մէջ միայն քարոզելու և մի նոր ժողովուրդ (բողբողակաք) կազմելու, առանց ասոնց որ և իցէ առանձնաշնորհութիւն մը պարգևելու։

Ասոր նպատակն էր բարեմիտ քրիստոնեաները զրգռել միմեանց ընդդէմ և փոփոխակի զմիմեանս հալածել տալ։ Արդարև այս հալածումը աղետաբեր եղաւ հայոց.

Նախ՝ ժողովրդեան մէջ մի նոր երկպառակութիւն ձգեց։

Երկրորդ՝ երկու կողմանէ մնստի վիճաբանութիւններով ժամանակ կը վատնուի։

Երրորդ՝ դարերէ ի վեր կրօնական ազատութեան համար արիւն թափող մի ժողովրդեան կարգն ու համարումը կոտրեցաւ Եւրոպիոյ առաջ։

Չորրորդ՝ Բ. Դուռը իւր չահուն նպաստաւոր սոյն քարոզչութեամբ ազգը երկպառակելով՝ քրիստոնեայ տարրը աւելի տկարացուց։

Վեսմաչուք տէր, ես դիս խիստ երջանիկ պիտի համարեմ եթէ բարեհաճիք սոյն տեղեկագիրը Նորին Վեհափառութեան Թագուհւոյն կառավարութեան և ձեր ազնիւ ազգին ուշադրութիւն ընծայելու չնորհն ընել մեզ։

Մնամ խոնարհ յարգանօք հայկական պատրիարքարանէ ի Բարձր Հայս զրկուած պատուիրակ

16 սեպ. 79 Վահան վարդ. Պարտիզակցի

իսկ կառավարութեան բարօրութեան որչափ կարևոր դերը խաղալ, կամ թէ թոյլ տուաւ քրիստոնէից մէջ միայն քարոզելու և մի նոր ժողովուրդ (բողբողակաք) կազմելու, առանց ասոնց որ և իցէ առանձնաշնորհութիւն մը պարգևելու։

Ասոր նպատակն էր բարեմիտ քրիստոնեաները զրգռել միմեանց ընդդէմ և փոփոխակի զմիմեանս հալածել տալ։ Արդարև այս հալածումը աղետաբեր եղաւ հայոց.

Նախ՝ ժողովրդեան մէջ մի նոր երկպառակութիւն ձգեց։

Երկրորդ՝ երկու կողմանէ մնստի վիճաբանութիւններով ժամանակ կը վատնուի։

Երրորդ՝ դարերէ ի վեր կրօնական ազատութեան համար արիւն թափող մի ժողովրդեան կարգն ու համարումը կոտրեցաւ Եւրոպիոյ առաջ։

Չորրորդ՝ Բ. Դուռը իւր չահուն նպաստաւոր սոյն քարոզչութեամբ ազգը երկպառակելով՝ քրիստոնեայ տարրը աւելի տկարացուց։

Վեսմաչուք տէր, ես դիս խիստ երջանիկ պիտի համարեմ եթէ բարեհաճիք սոյն տեղեկագիրը Նորին Վեհափառութեան Թագուհւոյն կառավարութեան և ձեր ազնիւ ազգին ուշադրութիւն ընծայելու չնորհն ընել մեզ։

Մնամ խոնարհ յարգանօք հայկական պատրիարքարանէ ի Բարձր Հայս զրկուած պատուիրակ

16 սեպ. 79 Վահան վարդ. Պարտիզակցի

վնասեց իր ոտքին և մի քանի օր է հիւսնդ նըստած է տանը։

—

«Кавказъ» լրագրի մէջ կարդում ենք հետևեալ հեռագիրը Կովկասեան սարերից, փետրվարի 13-ից։ «Եղանակը պարզ չէ, խիտ ձիւն է գալիս, քամին շարունակվում է։ Ցուրտը 5 աստիճան է։ Բալխիրների ճանապարհը առայժմս ազատ է։»

—

«Тифл. Вѣстн.» լրագրին հաղորդում են, որ եկող շաբթին Թիֆլիսի ռուս դերասանական խումբը կը ներկայացնի ռուսերէն լեզուով Սունդուկեանցի «Պէպօ» պիէսան, թարգմանութիւն Օպոչինինի։ Լրագիրը լսել է որ դերերը այսպէս են բաժանված. Պէպոի դերը, ասում են, կը խաղայ պ. Մարէլսկի, Դիքօ,—պ. Պալմ, Կակուլի—պ. Արբէնին, Ցարութիւն,—պ. Զէրնով, Կէկէլ,—ա. Ալէքսէեվա և այլն։

—

Խնդրում ենք «Մշակի» օտար քաղաքացի բաժանորդներին իրանց հասցէները փոխելու ժամանակ ուղարկել խմբագրութեանը երկու 7 կոպէկանոց փոստի մարկաներ։ Եթէ ոչ ադրէսները չենք փոխի։

—

Երէկ, փետրվարի 15-ին հեռագրով ուղարկեցինք կ. Պոլիս, պ. Կիւլպէնկեանի անունով, 2000 ռուբլ յօդուտ Վանի սովատանջների։ Այդ գումարից դեռ հրատարակված չեն Ախալցխայի նուիրատուների անունները և Թիֆլիսի Արծրունու քարվանսարայի վաճառականների անունները, որոնք նոյնպէս նուէրներ են հաւաքել յօդուտ Վանի սովալների։ Այդ գումարից 1000 ր. տուել է պ. Կարապետ Պօղոսի Փոթիից, 100 ր. Տէր-Մելքէլեան եղբայրները. 277 ր. զանազան անձինք, 371 ր. Ախալցխայի բնակիչները և 300 ր. Արծրունու քարվանսարայի վաճառականները (որոնք դարձեալ շարունակում են նուէրները հաւաքել). ուրեմն ընդամենը մինչև այսօր հաւաքվեցաւ 2048 ր., որոնցից 2000 ր. մենք ուղարկեցինք, ուրեմն մեզ մօտ մնում է 48 ր.։ Բացի սորանից մեր վերջին անգամ «Արարատեան» ընկերութեանը ուղարկած 3000 ռուբլ գումարի մէջ կար 122 ռուբլ յօդուտ Վանի սովատանջների։ Ուրեմն յօդուտ Վանի սովատանջների ընդամենը հաւաքվեցաւ մեր խմբագրութեան մէջ մինչև այժմ 2170 ռուբլ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Պրուսական պատգամաւորների ներկայ ժողովում՝ վիճաբանութեան առարկայ է դարձել դաւանութիւնների մինիստրութեան բիւջէայ։ Այս հարցը արդէն քանի անգամ է որ վիճաբանութեան է ենթարկվել, բայց մինչև այժմ դեռ մի որոշ եզրակացութեան չէ հասած։ Դաւանութիւնների մինիստր Պուտկամէր, պատասխանելով պ. Կլօցի առաջարկութեանը, ասաց, որ կառավարութիւնը մտադիր է գործադրել մայիսի օրէնքները մշտապէս։

Հռետորների բոլոր ճարտարախօսութիւնները, վիճաբանութիւններն ու հակաճառութիւնները դեռ մինչև այժմ չը կարողացան լոյս գցել Գերմանիայի և Վատիկանի մէջ ունեցած յարաբերութիւնների վրա. ուրեմն չը նայելով երկրի ներկայացուցիչների բոլոր ջանքերին, այնու ամենայնիւ գործի մէջ միշտ մի մութ կողմ է մնում, որի թելերը կառավարութեան ձեռքերում պէտք է որոնել։

Մայիսի յետադիմական խիստ օրէնքները մշտապէս են գործադրվում, միայն այն մխիթարական յոյսով, որ նրանց գործադրութիւնն այժմ համեմատաբար աւելի մեղմ կը լինի քանի թէ պ. Ֆալկի մինիստրութեան օրովը.—եթէ մեղմ էլ չը լինի, գոնէ խոստանում են այդպէս անել։

Գերմանական մի լրագիր պատմում է, որ Բերլինից դէպի Կէօնիգսբէրգ տանող Ճանապարհի վրա կրակ յայտնվեցաւ այն գնացքի վագոնների մէկում, որ տաքացրած էր շոգիով, և որ տանում էր ռուսաց Կայսրուհուն դէպի Ս. Պետերբուրգ։ Գնացքը կանգնեցրին մեծ տանջանքով, և այդ ժամանակամիջոցում յաջողացրին հանգցնել կրակը։

Գերմանական մի քանի լրագիրներ լուր էին տարածել, որ Բերլինի Ֆրանսիական դեսպան Սէն-Վալիէ հրաժարական է ներկայացրել, և այդ լուրը արտատպված էր Ֆրանսիական մի քանի կիսապաշտօնական թերթերում. այդ իրողութիւնն արդէն ամենքի համար հաւանականութիւն էր ստացել, երբ պ. Սէն-Վալլիէ պաշտօնապէս յայտնեց իր կառավարութեանը, որ այդ լուրերը նրա ցանկութեան համաձայն չեն տարածված, հետևաբար և նա մնում է իր պաշտօնի մէջ։ Այս առիթով «National Zeitung» լրագիրը յայտնում է, որ Սէն-Վալլիէի տեղը հաստատ մնալը ապացոյց է, որ Ֆրանսիական կառավարութիւնը համակրում է այն քաղաքականութեանը, որ դեսպանը մինչև այժմ ներկայացնում էր գերմանական կառավարութեանը։

Բացի այս, նոյն գերմանական լրագիրն աւելացնում է հետևեալը. «Մենք գիտում ենք, որ այս գործը նշան է գերմանական և ֆրանսիական կառավարութիւնների բարեկամական յարաբերութիւնների շարունակութեանը։»

Գերմանական մամուլը սաստիկ թշնամաբար է վերաբերվում դէպի Գերմանիայի դէմ գրված մի յօդուածը, որ տպված է «Times» լրագրի անցեալ համարներից մէկում։ «National Zeit.» լրագիրը բաղդաւոր է համարում իրան կարծել, որ անգլիական մամուլը համաձայն չէ այդ յօդուածի յայտնած մտքերին, և թէ դա միայն մի մասաւոր անհաւատ կարծիք է։

Անցեալ օրերս Էլզաս-Լոտարինգիայի պատգամաւորութիւնը մի ճոխ ճաշ տուեց երկրի կառավարչին և մինիստրութեան անդամներին։

Մարշալ Մանտէօֆֆէլ պատգամաւորութեան նախագահի ոստին պատասխանելով, ասաց հետևեալ խօսքերը.

«Շնորհակալ եմ ձեզնից, պ. Նախագահ, այն գեղեցիկ խօսքերի համար, որ դուք արտասանեցիք, ես խնդում եմ պատգամաւորութեան անդամների կենացը—բոլոր նրա անդամների, ներկայ թէ բացակայ,—որովհետև ես նուիրում եմ իմ ոստը ամբողջ Էլզաս-Լոտարինգիային։ Սրբ դուք ձեզ հանգիստ կը զգաք, պարոններ, դուք կարող էք կատարեալ ազատութեամբ թարգման հանդիսանալ երկրի ցանկութիւններին, և ազատ զգացմունքներով ու ձեզ արժանի անկախութեան ոգով կատարել ձեր բարձր կոչումը։ Սրանով դուք կարող էք ծառայել երկրի շահերին, և ես խնդում եմ պատգամաւորութեան անդամների կենացը։»

Սակսոնիայի ազնուականների ժողովում ընդունվեցաւ այն առաջարկութիւնը, որը պէտք է ներկայացնվի դաշնակցական խորհրդարանին, որպէս զի մի օրէնք հրատարակվի, որի զօրութեամբ կարելի լինէր ոչնչացնել վաշխառութիւնը։

Նուռմբերգի պատգամաւորների ժողովը կը զբաղվի զօրքի աւելացնելու ծրագրի վիճաբանութիւններով. կարծում են, որ վիճաբանութիւնները սաստիկ հետաքրքիր, հետևաբար և սաստիկ աղմկալի կը լինեն։ Պատգամաւորներից մէկը—պ. Դալլէ մի առաջարկութիւն է ներկայացրել կառավարութեանը, որով նա հրաւիրում է բավարական կառավարութեանը ներկայացնել այդ հարցի քննութիւնը դաշնակցական ժողովին։

Յաջորդ նիստերից մէկում կը քննվի այդ հարցը։

Պետութեան տարեկան բիւջէտը ներկայացված է դաշնակցական ժողովին. մուտքը և ծախսը միասին հաշված, հաւասարում է 544,888,184 մարկի։

Պետութեան սովորական ծախսը հաւասարում է 467,409,487 մարկի, իսկ անցեալ տարի միայն ծախսը հասել է 77,478,697 մարկի։

ԻՏԱԼԻԱ

—

Ցայտնում են, թէ կառավարութիւնը հաստատ որոշել է երկու նոր մինիստրութիւններ կազմել. մէկը դանձարանի համար, իսկ միւսը փոստային, երկաթուղիների և հեռագրական վարչութիւնների համար։

Լրագիրները յայտնում են, որ վերջին օրերս Փարիզից մի զբօսաքի գնացք (train de plaisir) հասաւ Հռոմ։ Ֆրանսիական ամբողջ գաղթականութիւնը, հազարաւոր ուրիշ մարդիկ, ինչպէս և մի քանի երաժշտական խմբեր գնացին երկաթուղու կայարանը, և «Կեցցէ՛ Իտալիա, կեցցէ՛ Ֆրանսիա» աղաղակներով, ընդունեցին ճանապարհորդներին։

«Italia» լրագիրը հաղորդում է, որ զվիցերական կառավարութիւնը պատրաստութիւններ է տեսնում, որպէս զի դալ ամառը փոստային ծանրութիւնները Իտալիա փոխադրելու համար Սէնգոթարդեան տօննէլով անցկացնէ։

Այսպէսով Սէնգոթարդեան ճանապարհը մինչև անգամ երկաթուղու շինվելուց առաջ էլ աւելի յարմարութիւններ կունենայ երթևեկութիւնների համար, քան թէ Մոնսէնեան ճանապարհը։

Այս վիթխարի տոնելը, որ այսքան ժամանակ ի վեր այնքան բազմաթիւ աշխատող բազուկներով անդադար փորվում է, դեռ չէ վերջացել։ Ասում են, որ լերան Իտալիայի և Զուիցերիայի երկու կողմից փորող մշակները այնքան մօտեցել են միմեանց, որ նրանք արդէն փոխադարձաբար լսում են միմեանց աշխատութիւնների ձայնը, ուրեմն մի քանի շաբաթներից, թերևս և մի քանի օրից յետոյ, նրանք արդէն միմեանց ձեռք կը սեղմեն, և աշխարհը ուրախանալով կօրհնէ նրանց աշխատանքը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Daily News» լրագրի կ. Պոլսի սեփական թղթակիցը հեռագրում է, փետրվարի 8-ից. Սիրիայի վրայով հետևեալը. «Երկու ժուռնալիստներն ես, որոնք բանտարկված էին Հայաստանի մէջ կատարվող բարբարոսութիւնները իրանց լրագրի մէջ նկարագրելու պատճառով, վերջապէս ազատութիւն ստացան, Հայոց պատրիարքի բողոքից յետոյ։ Կառավարութիւնը արգելեց հայ լրագիրներին Հայաստանի մէջ կատարվող բռնաբարութիւնների վերաբերութեամբ մի որ և իցէ բան տպագրել։»

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր կատարվեցաւ Փարիզում, փետրվարի 10-ին վախճանված սենատոր Իսահակ-Ադոլֆ Կրէմիէի թաղման հանդէսը, որը իր հայրենիքի ամենանշանաւոր փաստաբաններից մէկն էր։ Կրէմիէ ծնվեցաւ 1796 թվի ապրիլի 30-ին, Նիմում, հրէայ ծնողներից, և իրաւաբանութիւնը ուսումնասիրեց Էքսում, ուր, 1817 թվին, փաստաբան դարձաւ և նշանաւոր եղաւ իր ընդունակութեամբ զանազան քաղաքական դատեր պաշտպանելու մէջ։ 1830 թվին Փարիզի կասացիոնական դատարանի փաստաբան նշանակվելով, նա չուտով մեծ անուն հանեց, որպէս գլխաւոր պաշտպան ընդդիմադրական մի քանի գրողների և դէմոկրատների։ 1842 թվին Կրէմիէ պատգամաւորների ժողովի անդամ ընտրվեցաւ, որպէս Շինոնի ներկայացուցիչ, և 1846 թվին նա նորից ընտրվեց։ 1848 թվի փետրվարի յեղափոխութենից յետոյ, նա ժամանակաւոր կառավարութեան անդամ դարձաւ և յանձն առաւ արդարադատութեան մինիստրութեան կառավարութիւնը։ Յետոյ նա օգնում էր իշխան Լուի-Նապոլէոնի կանդիդատուրային, բայց երբ նա Ֆրանսիայի նախագահ ընտրվեցաւ, Կրէմիէ հակառակ կուսակցութեան հետ միացաւ և դարձաւ ընդդիմադրական կուսակցութեան ամենանշանաւոր հռետորներից մէկը։ 1851 թվի փետրվարի 2-ի պետական յեղափոխութենից յետոյ, նա քաղաքականութիւնից հեռացաւ և միայն դատաստանական պրակտիկայով էր պարապում։ Երկրորդ կայսերութեան անկումը կրկին կանչեց նրան դէպի քաղաքական ասպարէզը, և նա կրկին արդարադատութեան մինիստրի պաշտօնը ընդունեց, և 1870 թվի սեպտեմբերի 12-ին նրան ցուր ուղարկեցին իւրաքանչիւր մինիստրութենից ուղարկած պատգամաւորի հետ միասին թշնամուց չը գրաւած նահանգները կառավարելու համար։ Այս կառավարչութեան ամենանշանաւոր գործերն եղան Ալժիրիան երեք դեպարտամէնտների վրա բաժանելը Կրէմիէի առաջարկութեամբ, և Ալժիրիայի հրէաներին ֆրանսիական քաղաքացիութեան իրաւունք տալը։ Երբ, խաղաղութիւնը կապելուց յետոյ, ազգային ստորագրութիւն բացվեցաւ, Ֆրանսիան թշնամու գրաւումից շատ շուտ ազատելու համար, Ադոֆ Կրէմիէն մեծահոգութեամբ իր բոլոր մեծ կարողութիւնը տուեց հայրենիքի ազատութեան համար։ 1871 թվի փետրվարից նա Ալժիրիայի կողմից պատգամաւոր էր Ազգային ժողովում, որը, 1875 թվին, ընտրեց նրան ապագայ սենատի ցմահ անդամ։ «Alliance Israelite universelle» անուանված հրէական ընկերութեան հիմնադիր և նախագահ լինելով, նա իր հաւատակիցների քաղաքական և սոցիալական ազատութեան ամենամիր և առաջնակարգ պաշտպաններից էր։

***

Լօնդոնից «Indépendance Belge» լրագրին փետրվարի 8-ից հեռագրում են հետևեալը. «Մարկիզ Սալիսբրիի հիւանդութիւնը առաւել ևս սաստկացաւ։ Նա տիֆային հիւանդութեան մի սաստիկ տեսակով է վարակված։»

***

«Fremdenblatt» լրագիրը հաղորդում է որ Վիէննայի պոլիցիան, փետրվարի 7-ին, կալանաւորեց սոցիալիստ Պրագէրին, որը Լօնդոնի սոցիալիստների մասնաժողովի հրատարակած յեղափոխական բրոշիւրներ էր տարածում։ Պրագէր ամեն բան խոստովանվեց և նրան կը դատեն պետութեան դէմ դաւաճանութեան համար։

***

Լօնդոնի «Daily News» լրագրին Նէապոլից հեռագրում են հետևեալը. «Անցեալ գիշեր Վէզուվ հրաբուղխը գեղեցիկ տեսարան էր ներկայացնում։ Լաւայի նոր հեղեղները հոսում էին հիւսիս-արևմտեան ուղղութեամբ։ Հրաբուղխի բերանը կոնուսի ձև ունէր, որ պայծառ կարմիր գոյնով էր լոյս տալիս։

***

Լօնդոնից հաղորդում են լրագիրներին, փետրվարի 10-ից, որ գլխաւոր թատրոնը Դուբլինում ամբողջապէս մոխիր դարձաւ։ Կարծում են, որ հրդեհի ժամանակ վեց մարդիկ են այրվել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս.ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 փետրվարի։ Փետրվարի 6-ից մինչև 12-ի կառավարական բիւլետէն. Այս շաբաթվայ ընթացքում Կայսրուհու առողջութիւնը փոքր ինչ լաւացաւ։ «С. Петербургскія Вѣдомости» լրագիրը հաղորդում է, որ բարձրագոյն խորհուրդ է կայանում, որին կենթարկվին բոլոր գեներալ-նահանգապետութիւնները։ Նախագահ է նշանակվում Լորիս-Մէլիքով, որը երէկ պետական խորհուրդի անդամ նշանակվեցաւ։ Գուրկո հեռանում է ժամանակաւոր գեներալ-նահանգապետութեան պաշտօնից և Պետերբուրգի շրջանի զվարդիական զօրքերի հրամանատարի օգնական է մնում։ Տրէպով նշանակվում է Ս. Պետերբուրգի կամենդանտ, Զմերային Պալատի մէջ ծառայողների վրա հսկելու իրաւունքով։

Կ. ՊՕԼԻՍ, 12 փետրվարի։ Պոլիցիան գտաւ Պապազօպուլոս անունով մէկի մօտ ռումբեր և դինամիտի մեքենայ. վերոյիշեալ անձը յայտնեց, որ նա Անգլիայի հովանաւորութեան տակ է գտնվում։ Կասկածում են, որ սուլթանի կեանքի դէմ դաւադրութիւն կար։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ